

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1.2

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ

ԹՎ Կ Ք Լ Կ Ս

Անցյան ճեռական ընկերություն „Զակկենիգա“

1926

891.99  
Դ - 50

-04NOV2011

U.S. GOVERNMENT

AMERICAN LIBRARIES

U.S. GOVERNMENT  
AMERICAN LIBRARIES  
PRINTED IN U.S.A.  
GPO

891.99  
7-50

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



Ժ. Ե. Ց. Ե. Ա.

Ակտիւսներական բնկերություն «Զակինիպա»

1926

18 JUL 2013

## ԶԱԳԵՄԻ ԲԱՆՎՈՐԸ

Հանգիստ և Քուռ զետք, մոլոր ու անվրդով ափերի  
մեջ սեղմված, հավատենական նիշնչը յերեսին, անզորր-  
անխոսով, մեղմ վշշոցով ապրում եր իր թմբությունը:  
Ապրում ենա հին-հին փլատակների մեջ գեռ նիբ-  
հող անցյալի հուշերով:

Յերեմին դառնացած՝ դուրս և գալիս ափերից,  
կատաղի զայրույթով բարրաքվում-փրփրում ու նո-  
րից մտնում իր հունը՝ այնքան նեղ միալար ու  
վտիս...

Միաձույլ մի վիթխարի մեծություն, հոկա ապա-  
ռած, ժայռերի շերտավորութնիք, ցեմենտի ու կայծ-  
քարի հոծ զանգված:

Յերկրի կուրծքը ճեղքված, ոճուպույտ վոլորում-  
ներով անցնում ե մեծ ուղին:

— Զան Ակոր, ճեղքիր, ճեղքիր ապառաժը, չէ  
վոր յերկաթ և քու կամքը, առյուծ և քու սիրոը ու  
հոկա միտքը քու անհաղթելիւ:

Վոլորիր կուռ բարտկնմերդ, քու յեռուն աշխա-  
տանքի աղբյուրն և քու անդուլ վաստակը...

Մեծ վարպետ, ճակատդ խոր կնճիռներ, մազերդ  
ալեխառն, աչքերդ կրակ ու բոց, կյանքն և յեռում  
քու մեջ, համամարդկային մեծ կայծն և ծավալվում  
վիթխարի ու հոկա:

Օրերի մեղմ գաղանջը, նրա խորհրդավոր վշշոցը,  
նեղ ուրույն գալարութները պիտի լուն ընդմիշտ:  
Պրոլետարիատը համախմբված քու շուրջը, իր ամուռ



3324-61

բազուկների հաղթանակով, ուժգին հրամայական տեսպավ ջրերը դուրս պիտի նետե ափերից ու ջրվեժը կատաղի պիտի ծառանա հաղթական...

Հուժկու դիմամոն, հավերժածին ելեքտրոն—լուսափայլ ալիքներով կողովեն ամեն մի խավար անկյուն, ամեն մի մութ խորշ, մոռացված ու արհամարհված...

Ու մեր ուժերը միացած վրդրած ալիքներին, նրա մեծ թափի ու կատաղի վորոտումներին—մի նոր աշխարհ կը ծնի, մի նոր, չտեսնված յեռանդի աշխարհ, աշխատանքի, աշխույժի—կենդանի հրաշունչ աշխարհ...

Արև, լուսին, ծով ու լեռներ, աստղագարդ յերկինք, բուք ու փոթորիկ, վորոս ու կայծակ կը ձուլվեն իրար, մեծ պայքարի, մեծ հաղթանակի համար...

Այդպես և ծնվում նոր կյանքը... այդպես և լինում յերկունքը...

Զագեսի բանվորի ըրիչը սրածայր ձեղքում և ժայռերի կուրծքը, պատճեղ և կանգնում ստորյերկրյա ցանցով—գինամիտ ու կապայուլ, պատրույկ ու վառող ցնցում և ողբ, շրջապատը դղբղում, կատաղի վորոտը յերկինք և համառւմ...

Սուլում և սուլիչը, կուկուշկան ուելսի վրա, համաչափ զարկերով անցնում և առաջ:

Հազարավոր ձեռքեր, իրեկ մի մեծ հսկա, տարրնում հն նոր ուղին, հարթում լայն ճանապարհը, կերտում մեծ շնորհը, մեծ ջրամբարը շինարար աշխատանքի...

Մերն և այս բոլոր, մենք ենք նրա հաղթական տերը, մերն և աշխատանքը՝ մեզ յեռանդի ու աշխույժի վաստակը: Հնչում ե պրոլետարիատի ծայնը, հոգորդում ամբողջ աշխարհին...

Ու Զագեսի ոլեսարը կամար և կապում պողպատ սյուներից՝ ամուր ու կանգուն...

Ու Զագեսի քարհատը յերգում և խրոխա, հետը հյուսում և ցեմենտ ու ավագ: Ամուր և նրա զարկը, ուժեղ ու կայտառ: Մեծ աշխատանքի նա հիմքն և դնում...

Ու Զագեսի գարբինը—Զագեսի սիրաը իր զարկերի հետ կապում և նոր ուխտ. անխոնչ ջատագով հարյուրավոր տարիներ արյունով գնած, հարյուրավոր տարիներ տանջանքով հյուսված. և մեծ հաղթանակի անմահ որերին ավետում և նա...

— Այսպես և ծնվում նոր կյանքը, այսպես և լինում մեծ յերկունքը...

1925 թ.

## ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը

I

Ում ե առաջնորդում, ուր ե տաճում նաև թագի,  
գահի հմայքով կլանված...

Կեղծ բողոքի, վրգովմաւքի դիմակով քողարկ-  
ված դիվային քրքիջը շրթին, քաջ առաջնորդ—Գա-  
պան... Գապան...

Ահա վիթխարի պալսար, ահա հաղթական կո-  
թողը վրակի գմբիթով զարդարված, պատերը հակա-  
տմրակուս, պարիսպները զեղանկար:

Ներսը գահը... գահը ձահիճ, գահը զգվանք, ցո-  
փության փորբան...

— Հեռու, հեռու այդ գարշանքից, այդ ստոր,  
լկտի վեղարափոր թագակալից...

Փողոցը, սալահատակը, ձյունի հասա շերտավո-  
րումները, յերկաթի ողակները, կանգուն կամարները  
թույն են պարունակում, զազրելի թույն...

Բայց նա գարափոր թմրությունից արթնու-  
ցած անցնում ե առաջ, գնում ե հաստատ քայլերով՝  
ձակատը բաց, սիրոբ ալեկոծ, բողոքը շրթին...

Անցնում ե նա հաղթ, անխոռվ, հարթելով մեծ  
ձանապարհը, փոթորկալից ու ահեղ...

Անցնում ե տիյեղերական կապանքների, կուռ  
շղթաների ու վայրագությունների գեմ մաքառելով...

Այնտեղ, այնտեղ, ուր զուց իր գերեզմանն է  
պատրաստվում, այնտեղ, ուր իր արյունը պիտի  
թափվի...

Վորագայթի բոլոր ցանցերը արորելով, կապանք-  
ների բոլոր շղթաները խորսակելով անցնում ե նա ու-  
սած, կամքը հզոր, հայացքը վրեժ...

Ով կը հանդինի վիթխարի սիրաը փշելու  
արձի ու գնտակների տարափը, թնդանոթների ու  
գնտացիքների փորսոր, սվինների ու մերկացրած  
որերի սարսափը չեն կանգնեցնիլ տիյեղերական հոկայի  
վիթխարի գրոհը...

Ինքը, հայր Գապոնը, փառքից կուրացած՝ տվեց  
աղատություն իր ատած, իր նողկանքի ու գարշանքի  
սարուկներին...

Նա ուզեց իր մի ահեղ նշանով բնաջինջ անել,  
խորտակել արմատահան անել նորաբողբոջ ծիլերը...

Չե՞ փոք այնտեղ հազարափոր սվիններ, հեծյալ ու  
հետեակ, գնտացիք ու թնդանոթ, գահիճ ու գահճա-  
պեմ՝ գարան մտած՝ սպասում են իր հրամա-  
նին...

Շուտով կրակ ու շղթա, բոց ու ալիք, վորոտ ու  
վառող, ձիանց տրոփյուն, զենք ու շառաչյուն, աջեց  
ու ձախից, ձակատից ու թիկունքից ծուլակը կառնեն,  
կը ձգմեն նրանց յերկաթ ճանկերում...

Ու հրճվում ե Գապոնը, հրճվում ե իր նեխված  
հոգով, իր այլանդակ արարքների հմայքով... քրքիջը  
շրթին դիմում ե գործի...

... Պալատը գողում ե... փեղկերը շարժվում են  
փորուից ու շառաչյունից...

... Մայթերը ներկվում են կարմիր արյունով,  
մասյ ու սրախողխող գիակներ ցաքուցիր...

... Փողոցը մոայլ փողոցը ամայի ու գհատ...  
գահը կանգուն ե... գահը ամուր... գահը վիթխարի...

պալատի սարուկը հրճվանքով լցված՝ համբուրում և Գապոնի սե շրթունքները... գալարվում և բալետների մերկ սրունդները գրկած ու ձարպու փրեյլինների վոտքերը լիզում...

Գապոնը մեծ՝ պալատի սիրտը. փառարանում և նրան ու տոնում են իրենց այսորվա հաղթանակը...

Ու պալատի ստրուկները՝ ի մի գումարված՝ քըրքջում են ծաղըլ... ծաղըլ նվազով... ծաղըլ յերկով ու պարով...

Ու մինչև արեի ծաղըլ, մինչև արեի մուտքը, հրճվում են նրանք իրենց փառքով, իրենց մեծության ու մոլորության հմայքով...

Ու ցածը, հրամանին հլու՝ զինված զենքերով պատճեց են կանգնել, վոր ներս չը խուժի ամբոխը ստրուկ, վոր կանգուն մնա պալատը վիթխարի...

## II

— Ե՞յ, հեյ Գապոն, սրիկա, խարերա, զոռում և մասսան, յերկինքն ե դողում...

... Ու մի նոր թափով սեղմում ե նա իր շարքերը խիտ, վրեժով լցված, լի զայրույթով կատաղի գրոհով առաջ ե շարժվում:

Նորից պայքարի մի ահեղ կոիվ, նորից վորոտում, նորից շառաչյուն...

Զրերը գետերից յետ-յետ են վազում, հիմքից դողում և պալատը զարավոր...

— Ե՞յ, հեյ Գապոն, շտապիկ, շտապիկ դորքը այստեղ, գոռում ե մասսան և միաձույլ, իրրե վիթխարի տիտան առաջ ե շարժվում...

Պալատը ընկալ, պատերը յերերուն ձեղքիված են ալիւ...

Դողում ե պալատի խրովիլակը... Ո՞վ համարձակվեց, ով հանդինեց մոտենալ պալատին, ձչում և հուսահատ ոչ լքված հայր Գապոնը:

— Ես եմ քանդել նրա հիմքը, յես եմ խորտակել քու մեծ պալատը... լսկում ե փողոցում ընկած արյունաներկ մանուկի ձայնը...

— Իմ կոշտացած յեղունգներովս եմ ջարդուփշուր արել քու գարավոր թմրության մեջ նեխված պարիսպները... սոսում և նրան գեղջկուհին...

— Իմ արյան կաթիլները ծծվել են գետնի խորքը ու անցել պալատի հիմքը ու խարխուլ դարձրել նրան, հնչում և տանջված բանվորի կոչը...

— Տարեցտարի հավաքված իմ արցունքների հեղեղն և հալեցըել քու վոսկի թափը, լսկում ե մորմոքված ու տանջված մոր աղաղակը...

— Քո բոնի հրամանների, արձճի տալսափի, մերկացրած սրերի, կախաղանների գոհ գնացած մեծ հեղափոխականներին զայրույթն ե բոնկվել ու թունավորել քու գահը, հնչում ե նա վայրագ ու կատաղի...

— Իմ կուսական արբունքից խլած լոլիրշ հեշտանքի թույնն ե խտացել ու գահավիժ արել քեզ, բացականչում և պալատի հարձ գարձած կույսը...

— Սարսուսի ու ցնցումի ճիրաններից ահարեկված արյան բոցն և հալեցըել քու այնքան ամրակուս ու անհաղթելի փառքը... խոսում ե գահիճը՝ շղթաներն ու կապանքները ջարդուփշուր վոտների տակ...

— Զնդանի մեջ կաշկանդած, արյան ու թույնի

մեջ զապած, դարերի բռնության զայրությն և բռնկվել  
ու տապալել քեզ... խոսում և զառամյալ բանտա-  
պետը...

— Սերնդեսերունդ, լունակալության գեմ խոռ  
պայքարը կովի ու մարտի մեջ միսվել—կյանք և առել  
հաղթ ու վիթխարի—սա մեծ Ծուսաստանի աշխատա-  
վոր ժողովուրդն և ի մի ծուլված՝ հաղթանակով գրու  
տվել ու վերջնականապես բնաջինջ արել քեզ...

Ահա հյուսիսի տիտանը իր հաղթ թևերով սրա-  
նում, ճախրում և ամենուրեք, աշխարհից-աշխարհ,  
ովկիանոսից ովկիանոս, հյուսիսից-հարավ, արելքից-  
արեմուտք, բերելով իր հետ մի նոր արշալույս, կեն-  
արեր շողերով, վերածնության ու հաղթանակի պատկ-  
ներով զարդարուն...

... Ու յես կանգնած ելլրուսի ձյունապատ գա-  
զաթին, արյան ու պայքարի մեջ ծուլված, հնոցի ու  
զնդանի մեջ միսված, համաշխարհային մեծ հաղթա-  
նակի դրոշը ձեռքիս, ամրող կրծքով կազազակեմ.—  
Վողջույն քեզ, մեծ Ծուսաստանի աշխատավոր ժողո-  
վուրդ, վողջույն քեզ մարդկության լուսատու փարոս...

... Ու իմ վաստակավոր վոսկորներս ու ձյունի  
պես ձերմակ մազերս հանգիստ կանոն այնտեղ լե-  
րան բարձր գագաթին—այնտեղ, վեհության ու ազա-  
տության կրծքում... ու իմ խոհերը ու հոգուս ազա-  
թությները կը սլանան, կը թաշեն հեռուն-հեռուն,  
անհուն տիյեղերքի ամեն մի մութ խոշոր, ամեն մի  
մոռացված անկյուն...

1925 թ.

## ԲԵՐՆԱԿԻՐ ՀԱՄԲՈՆ

Ինչպես եղավ, վոր Համբոն բեռնակիր դառավ—  
ինքն ել չգիտեր:

Փոքրությունից մտավ արհեստ սովորելու. վար-  
պետը ծեծեց զուրս արավ. զուրանի աշկերտ եղավ.  
այնտեղից ել զուրս շպոտեցին:

Մեծացավ փողոցում, դառավ փողոցի իսկական  
տպա:

Յերբ ուշքի յեկավ, փալանն առավ ուսը, ընկավ  
բեռնակիրների շարքը, ու այդ որից, հաշտված իր վի-  
ճակին, տանում և իր չարքաշ կյանքը:

Այժմ ել բեռը շալակին գնում եր...

Մինչև յերբ —ինքն ել չգիտեր...

Անողոք կյանքը կարծես ընդմիշտ դատապարտել  
եր սրան լինել բեռան տակ և գուցե այնտեղ ել փշեր  
իր վերջին շունչը:

Քրտինքը կաթ-կաթ ծորում եր յերեսից, վիզը  
ձգած գեպի առաջ, դողող քայլերով շարժվում եր. նա  
գնում եր բեռնակիր սայլապանի յետեկից:

Խիստ-խիստ նայեց ձիուն. ինչ տարբերություն  
իրա և այն սպիտակ ձիու մեջ...

Յեթե իրեն ել մտրակեն այնպես յերեսին, գըլ-  
խին, աչքերին ու դարձանով լի պարկը կախեն  
վզին...

Ահա յերեխան գալիս ե, նաև քաղցած ե, հաց և  
ուզում:

Նա մայր չունի, մայրը տանջվեց, տանջվեց—չը-  
դիմացավ ու մեռավ. իսկ ինքը ինչու և տպում...

— Հայրիկ, հաց:

— Զան, բալիկս, մի փոքր ել համբերիլ, և շա-  
լակն ել տեղ հասցնեմ:

Յերեխան գոհ ե. հայրը հաց կառնի, սպիտակ  
լովաշ: Նա հանդարտ քայլում է հոր յետելից:

Ինքն ել կը մեծանա, հայրը նրա համար մի  
փոքրիկ փալան կը կարի, ինքն ել հոր պիս մեծ-մեծ  
կապոցներ կը շալակի, կը բարձրացնի աստիճան-  
ներից վեր...

Մտան աղմկալից փողոց. կառքերը իրար յետելից  
գնում են անսկերջ: Յերեխան, սարսափահար, ամուր  
քաշում է հոր փեղը:

— Կանզնիր, կառք և զալիս:

Հայրը անխռով անցնում է առաջ:

Տեղ հասան, բեռը իջեցրին: Քրտինքը սրբեց,  
ձականը արորեց: Սպիտակ ձիու ձական ել են շփում:  
Հանգստանում են:

Չին դարման է ուտում, իրենք սպիտակ լավաշ:  
Բեռնակիրն ու ձին հոգնած աշքերով նայում են  
իրար և համբ ու լուս կարծես խոսում են...

— Շատ և համեղ քու դարմանը, ձի ընկեր:

— Իսկ քո սպիտակ հացը:

— Համեղ ե, բայց չենք կշտանում. իսկ դու:

— Յես միշտ ուտում եմ, յերբ պարկումս զար-  
ման կտ:

— Յեվ քու պարկը միշտ լիքն և լինում...

— Այո, յերբ բեռան տակն եմ...

— Շատ եր ծանր և որ քու բեռը, ձի ընկեր:

— Հազիվ եյի վոտքերս շարժում:

— Իսկ դու:

— Յես... քիչ եր մնում բեռան տակ մեջքու կո-  
տրվեր:

— Յեթե քու եղ յերկար մեջքը իմս լինե՞ր...

— Յեթե քու այդ յերկու ձեռքը տային ինձ,  
միայն թե մտրակը...

Մորակը...

— Այո, տեսնում ես. Նա արդեն շարժվում է...  
«բավական ե, հանգստացաք, վերկացեք», գոռում է նա:

Չին գլուխը պարկից հանեց, Համբոն ել փալանն  
առավ ուղը. բեռները շարան-շարան թափվում ու ամ-  
բարվում են պահեստներում:

Մութը կոխեց. ամեն ինչ լսեց: Չին իր ախո-  
ռում, բեռնակիրը սրահում հանգստանում են:

Յերեխան քնած ե, բայց Համբոն գառը մտած-  
մունքներով պաշարված, մախաթը ձեռքին կարկա-  
ռում է իր փալանը...

Փալանը բեռան տակ տրորվել մաշվել ե, բայց իր  
մեջքը վարքան ամուր ե. վողնաշարը, ուսերի վոս-  
կորները... յերկաթ են զանել...

Հետեյալ սրը կյուրակի յե, ձին հանգստանում ե,  
բայց Համբոյի համար պատ որ չկա:

Լույսը ըբացված՝ մի կողովը մեջքին, մյուսը թին  
առ ու շտապեց շուկա:

— Մշակ, մշակ, կանչեց նրան մեծատան խոհա-  
բարը:

Ծուկան լի յեր ամեն տհսակ մթերքներով. Անց-  
նում եյին նրանք խանութից խանութ ու կողովները  
կամաց-կամաց լցվում եյին. Մոեղեն, ձգնեղեն, հնդկա-

հավեր, միբոք... ինչ ասես, վոր չեր շալակել ու կոներն  
առել Համբոն:

Խոհարարի յետեից զլխակոր քայլում եր: Յե-  
րակները ուռել ելին յերեսին, մկանները ձգվել վոտ-  
քերը ծալվում ելին բեռան տակ բայց դեռ դիմա-  
նում եր:

Մի փայրկյան կանգ առավէ Բեռով հենվեց պա-  
տին, ամբողջ կրծքով ազատ շունչ քաշեց ու նորից  
շարունակեց իր ճամբան:

— Ծանր ե համ, բեռդ, բիճա, նկատեց խոհա-  
րարը...

Համբոն լուռ եր. քաղցը, հոգնածությունը, բե-  
ռան ծանրությունը ընկճել ելին նրան:

Խոհարարը բաց արավ մեծ դարձասի դուռը, վո-  
լորապտույտ սրահանցքերով հասան յերբորդ հարկի  
աստիճաններին. հանկարծ տչքերը մթնեցին ու նա  
չիմացավ ինչ պատահեց իրեն հետ...

Յերբ ուշքի յեկավ, ամեն ինչ հավաքել ելին:

Խոհարարը դատարկ կողովները զլխովը տվեց ու  
դուրս արավ:

Մոլոր ու վհատ կանգնած եր նա փողոցում քա-  
րացած:

Նայեց շուրջը. կյանքը յեռում եր: Գալուն եր,  
բնությունը արթնացել, ծառերը ծաղկել ու թռչուն-  
ները իրար ելին խառնվել:

Իսչաւ... մի բոլորի, մի ներքին վշտի ու կակծի  
հառաջանք դուրս թռավ նրա կրծքից...

Ուժ հայտներ իր վիշաը...

Քայլերը ուզգեց գեպի տուն, կողովները գըեց մի  
անկյուն, փալանը հանեց ուսից, մոտեցավ յերեխայի

կողինքին. նա դեռ հանգիստ քնած եր:

Մտավ ախոռը, այնտեղ մարդ չկար. ձին եր մե-  
նակ դատարկ պարկը զլխին կանգնած. նա ականջները  
որեց, տիսուր ու մոայլ նայեց Համբոյին:

Յեվ կարծես յերկուսն ել այդ համբ լության  
մեջ զգում, իրար հասկանում ելին...

Համբոն մոտեցավ, գրկեց ձիու գլուխը, և մարդ-  
կանցից հեռու, ախոռի այդ խուլ անկյունում, դառը  
հեկեկում եր: Թափվում եր և ձիու աչքերից պղտոր  
հեղուկը...

... Հայրիկ, հաց... լսկեց յերեխայի աղեկառուր  
ձայնը... ու ամեն ինչ լսեց:

1922 թ., ոգոստ.

## ԳԻՇԵՐԱՊԱՀԸ

Քաղաքը նիբհում եր: Մութն եր ամեն տեղ,  
մռայլ ու համբ, միայն զիշերային խավարի մեջ մերթ-  
ընդմերթ լսում եր պահակների թախծոս սուլոցնե-  
րը, ու նորից լուս, քարանում ամեն ինչ:

Մեծ փողոցներից մեկի անկյունում, վհատ ու  
հուսահատ, անցուղարձ եր անում զիշերվա «Հասաս»  
Սեթոն:

Նա կարծես տաղասուկը փարատելու համար դի-  
մեց մայթի վրա պառկած փողոցի միակ կենդանի  
արարածին:

— Քանի տարի յե, վոր զու այս պատի տակ  
կուչ ես գալի ու զիշերները լուսացնում:

— Դու վագսում ես, յերեկ քաղցած ես, արի կի-  
սենք իմ ունեցածը, մոտեցիր, մի վախենալ չե վոր ես  
որվանից գարձել եմ քու ընկերը:

— Տեսնում եմ, զողում ես, յերեկ մրսում ես,  
ձյուն ե, քամի, սաւնամանիք... հենվիր այստեղ, կող-  
քիս, պատը կը պաշտպանե մեղ յերկուսիս ել:

— Դու ամեն ինչ հասկանում ես, ավելի քան  
մենք, մարդիկս, ի՞նչ ես այդպիս թախծոտ նայում  
ինձ, յերեկ գու ել ես խղճում ինձ, վոր յեկել քու  
պաշտոնն եմ կատարում: Մի խղճալ... մի սահպիր  
վոր քո առաջն ել ստորանամ, չե վոր դա այնքան  
ծանր ե ինձ համար:

— Պոչդարժամ ես, յերեկ համաձայն ես ինձ  
հետ: Բայց յես ուրիշ ճար չունեյի. զնացի «Աշխա-

տանքի» տունը. անգործ եմ, ասացի, աշխատանք, պա-  
րապմունք տվեք: Շատ եմ զնացի-եկել... խնդրում եմ...  
Խիստ-խիստ նայեցին վրաս:

— Տգիտության մեջ մհծացել, յեկել գործ ես  
խնդրում, գրել-կարդալ գիտենայի, այստեղ չեյի  
դու:

Զգիտեմ ինչու ուստ խոսեցի, յես շատ թե քիչ  
զրագետ եյի:

332 Հ-64

Նրանցից ամենամեծը մոտեցավ ինձ, խիստ քըն-  
ական նայեց ինձ:

— Զբանցքում ծառայել եր, կարծիս յես ձեզ  
ձանաշում եմ:

— Անուն-ազգանունդ:  
— Նորից ստեցի:  
— Ուրեմն վոչ մի արհեստ չզիտեք:  
— Քանի տարեկան եք, ի՞նչ աղգից:  
— 56. ազգս ել ասացի:

Նայեցին յերեսիս, խոսեցին իրար հետ և վճռեցին.

— «Հասաս» պիտի լինսի:  
— Հասան, ի՞նչ ե դա:  
— Խանութների զիշերվա պահապան, հակիչ: Ար-  
թուն պիտի մնաս, նայես, վոր զողություն չը պա-  
տահի: հեշտ գործ ե:

— Բայց դա ավելի շուտ մի լավ գամփուի...  
— Խանութի տերերը մարդ են պահանջում, և  
որոյմանները շատ ե լավ:

— Տար խանութ ե, և վոր զիմավորն ե  
նրանք քեզ կը կերտարեն հերթով, յերեկ մի քիչ ել  
փող կը տան:



— Յեթե կարելի յե մի ուրիշ պաշտօն, քար կը քաշեմ, կիր, ավագ կը շաղախեմ. վորեե ոև աշխատանք... այդ բոլորը սիրով կը կատարեմ, բայց այդ շան գործից ինձ ազատեցեք:

— Միակ քեզ հարմար գործը դա յեւ ձարահատյալ համաձայնվեցի:

Զգիտեմ ինչու, հիշեցի իմ մարկությունը... յերբ դեռ փոքր յերեխաւ եյի, գյուղում մեր շները մի հատ մեծ գուռ ունեյին, յերբ լավը լցնում եյինք այնտեղ նրանք վրա եյին ընկնում ու միասին լակում եյին:

Յես նայում եյի ու զարմանում, միթե այդչափ քաղցած կարելի յե լինել: Այժմ ինձ վիճակված և տասը գուռ ունենալ ու նույնչափ քաղցած լինել...

Այսոր, յերբ իրենք ձաշեցին, հիբթով մնացած թիքա-բրգուչը ածեցին առաջս ու յես նույն ագահությամբ վրա ընկած...

— Զքնես, արթուն կաց, ամբողջ գիշերը հըսկիր, լուսացրու վոտիդ վրա, պատվիրեցին նրանք: Զմոռացան և քու մասին. «Չուն հլ ունենք այնտեղ»— ավելացրին նրանք, տես, նրա փայն ել պահեցեք:

Հե վոր քու ականջները այնքան սուր են, քու հոտառությունը զարգացած... ոզնիր ինձ. յեթե նրանք — գողերը զան, յես իմ մահակով, զու քու ժանիքներով: Իսկ յեթե ատրճանակի մի զնոտակով վերջ տան իմ կյանքին, վոչինչ, զու կը հաջես, աղմուկ կը հանես ու իմաց կտաս տերերին:

— Այ, տեսնում ես ստվերներ, ահա և վոտքերի ձայներ, յերեք հոգի յեն... ինչ ես պոչդ շարժում. նրանք գողեր են:

— Ե՞յ հեռացեք, ես տաս խանութին ել իմս ե. չմոտենաք, անցեք:

— Տեսար, սուս ու փուս հեռացան: Իսկ զու պոչդ նորից շարժում ես... ինչ ե, ասում ես, վոր նրանք աղքամաներ եյին, փողոցի շրջմոլիկներ, ավելի վատ, քաղցած են, համականում ես. իսկ քաղցածը ինչ ասես կանի...

Հե վոր մեր խանութիները ուտելեղեններով լիքն են ու այնքոն համել, գայթակղեցուցիչ բաներ կան այնտեղ...

— Ինչու զնացին. ձիշտ վոր գողեր չեյին, կը խոսեյինք իրար հետ, զու լսում ու մենակ նայում ես աչքերիս. այնքան թափիծ կա հայացքիդ մեջ...

Ճիշտ ե, զու յես միակ արարածը, վոր ինձ հասկանում ես. բայց չէ վոր նրանք մարդիկ եյին...

Տեսնում ես, եկեւ քեզ ընկերացել եմ, սովոր չմեռնելու համար միայն:

Ի՞նչ անպետք մարդ եղան ես այս աշխարհի համար:

Ինքս ել չգիտեմ ուր պետք ե դնեմ իմ տանջված գլուխը... ինչի՞ համար եմ ապրում...

Ամեն զիշեր պետք ե վիտանամ այս մայթին, ցեխի ու տիղմի մեջ, վորպես զի նրանք այնտեղ մահճակալի նուրբ անկողնում հանգիստ քնին—վայելին իրենց փարթամ կյանքը...

Յուրատ ե, սառնամանիք. մրսում եմ. սեղմվեր ինձ, թող մեր ճակատագիրն ել այսպես անցնի...

Շունն ու մարդը գառել եյին մտերիմ ու հարազատ. Սառնամանիք ու յերկար ոև զիշերներ շատ եյին

Եռաւացրել նրանք միասին. բայց մի յերեկո հասածը  
յեկավ ու ինչ զարմանք, շունը իրա տեղը չեր:

— Նուրին, Նուրին, կանչեց նա, բայց ձայն չկար...  
ձանը եր Սեթոյի համար. միակ արարածը, վորը թէ  
ընկեր-խոսակից եր, թէ պաշտպան ու միիթարիչ:

— Նուրին, Նուրին, կանչեց նա նորից:

Լուս եր շուրջը. վհչ մի ձայն: Ո՞ւր կարող ե  
լինել...

— Յեթե ցերեկը «շուրջիլլի» ժամանակ նա ել  
ընկած լինի ցանցի մեջ, մտածեց Սեթոն. բայց նա  
այնքան զգույշ եր և ամեն ինչ հասկանում. թակարդ  
ընկնող պտուղ չեր Նուրին, միիթարում եր ինքն  
իրեն:

Գիշերը կես եր լինում, բայց շունը չկար:

Իսկ յեթե մսագործները... նա սարսափեց այդ  
մտքից: Շոտար քայլերը ուղղեց վեպի շուկան, բայց  
այդանու ել վոչինչ չկար: Հուսահատ վերադասնում եր,  
յերը ականջին հասավ մի խուլ վնասոց...

Նուրին, Նուրին գոչելով քայլերը արագացրեց դե-  
պի ձայնը:

Շունը վիրավոր ընկած եր մի խանութի առաջ,  
փոսի մեջ և ամրող մարմնով դողում եր: Սեթոյի  
կանչին նա մի ճիդ արավ, ուղեց վոտի կանգներ, բայց  
նորից ընկավ վնասուալով:

Սեթոն առավ նրան իր գիրկը և փաղաքշելով  
բերեց եր խանութների առաջ:

Վերքը զլսեցն եր և շատ ձանը. ինչ աներ, ին-  
չով փաթաթեր, միակ յելքը հաղի հին բաճկոնն եր.  
հանեց, փաթաթեց ինսաքով:

Շունը դողում եր, դողում եր և ինը, ցուրտ եր,  
սառնամանիր:

Կուչ եկավ, կալավ շանը. գառը մտքեր պաշա-  
րեցին նրան... Կարծես այլիս ցուրտ չեր զգում, անո-  
րոշ թմբություն պատել եր նրան, աչքերը փակ-  
վում ելին.

— Քսիր, Նուրին, հանգստացիր, յիս ել կը քննեմ...  
Փողոցում ամեն ինչ լսեց: Շունը ամեն չեր  
վնասում, չեր լսում և Սեթոյի ձայնը:

Լուսացավ...

Յեկավ խանութի տերը և նկատելով, վոր փեղ-  
կերը գես փակված են, բարկացած վոսով հրեց  
Սեթոյին:

— Ի՞նչ ես շնթռեր, վերկաց, փեղկերը բաց. ան-  
ոլիսան:

Սեթոն անշարժ եր:

Տերը կատաղի գոռալով նորից հրեց:

Շունը բաճկոնի տակից զլուխը հանեց, վնասուց.  
այնքան ցավագար, և սկսեց հաջի տիրոջ վրա:

Տերը նոր զգաց, վոր Սեթոն սառեր, փետացել և:  
Փողոցի ու կառքը յեկավ և արավ Սեթոյի սա-  
ռած մարմինը, ու ամեն ինչ վերջացավ:

Խանութները բացվեցին, առևտուրը սկսվեց.  
կյանքը յետում եր, միայն շունը եր, վոր գես վնասու-  
մում եր ու աչքերից թափում կաթիւ-կաթիւ պղոսոր  
հեղուկը...

1922 թ., սպոստ.

## ՓՈՔՐԻԿ ԵՎԴՈՆ

Դաղ առափուտվանից Շողերը վագեց ծաղկանոց:  
Եղ որվա համար, մեծ հանդիսին, նրան հարկավոր եր  
շքեղ ու գեղեցիկ մի ծաղկեփունչ:

Վոգելորված յերգում, խաղում, թոշկոտում եր  
նու ծաղիկների մեջ:

Ահա վարդի թփերը. նա ջոկեց ընտիր ու բոզբոչ  
կոկոնները, անցավ ծաղիկների շարքը—շուշան, մեխակ,  
հասմիկ, ապա կանաչ թագշի մեջ՝ ծափի կոճղին նստեց  
ու սկսեց ինամքով փնջել հավաքած ծաղիկները:

— Մայրիկ, տես վորքան գեղեցիկ ե, ես որվա  
հանդիսի համար եմ հավաքել:

Մայրը այդ որը տիսուր եր. թափծալից նայեց  
նու ծաղիկներին, ապա աղջկանը առավ գիրկը, սեղմեց  
կրծքին ու լուս սկսեց. հեկեկալ:

— Մայրիկ ջնն, ինչ ե պատահել, ինչու յեռ  
լամիս:

Մայրը աչքերը սրբեց ու հեկեկանքը զոպելով,  
դարձավ աղջկանը.

— Դու մեզ չես թողնիլ, չե՞ Շողեր... յեթե մեր  
տունը զա մի մարդ ու տակ, վոր դու իրա աղջիկն ես:

Յերեխան աշքերը լայն բացած՝ նայում եր մորը,  
վոչինչ շըմրոնելով նրա առածներից:

— Լսիր, Շողեր, դու այժմ 12 տարեկան խելացի  
աղջիկ ես ու ինձ գուցե կարողանաս հասկանալ... Մոտ  
տասը տարի սրանից առաջ ապրում եյինք մենք նավ-

թային քաղաքում: Իմ առաջվա ամուսինը և քու հայրը  
աշխատում եյին Շագիգանովի զործարանում:  
— Իմ հայրը, զարմացած հարցրեց աղջիկը:  
— Այս, քո իսկական հայրը:

Յերկուսն ել բանվոր-աշխատավորներ եյին... են  
ժամանակ զաղանի, հեղափոխական ժողովներ եյին  
լինում: Նրանք մասնակցում եյին այդ ժողովներին:

Մի անգամ մեծ զործագույի ժամանակ իմ ամու-  
սինը խառնակության մեջ սպանվեց, իսկ ընկերոջը  
բանտարկեցին ու աքսորեցին Սիրիք՝ տաժանակիր  
աշխատանքի:

Նրա կինը—քու խեղճ մայրը, վորին զու ան-  
չափ նման ես, ընկավ ծանր ու անտանելի կացության  
մեջ: Ինչ ուներ ծափեց և վերջը թոքախտից մե-  
ռավ:

Դու հազիվ Յ տարեկան դալկացած ու մաշված  
յերեխան եյիր, յերը քեզ վերցրի ինձ մոտ:

Քո իսկական անունը Եգոր յե և ազգով վրա-  
ցուհի յես:

Մայրդ իր վերջին շնչին կանչեց ինձ իր մոտ...  
քեզ եմ հանձնում իմ վորբացած ու անբախտ Եգոր-  
յին... հազիվ շնչացին նրա շրթերը, ու հափիտյան  
փակվեցին նրա այնքան տաճնչված աշքերը...

Յերեխան ամբողջ մարմնով ցնցվեց ու արտա-  
վալից աչքերով նայում եր մորը:

— Յես սրտով ուզում եյի մի աղջիկ ունենալ ու  
անվանել նրան Շողեր. քեզ ընդունեցի իրրե հարա-  
զատ իմ յերեխային և անվանեցի Շողեր:

Սրանից մի քանի տարի առաջ, հոկտեմբերյան մեծ  
հաղթանակի շնորհիվ հայրդ աղատվում ե Սիրիքից ու

Հենց այդ որից սկսում է վորոնել քեզ: Խեղճը անցնում է քաղաքից քաղաք, ամեն տեղ փնտրում է իր եվդոյին, բայց վոչ մի տեղ չի գտնում նրան:

Յերեկ, յերբ դու գեռ ուսումնաբանութեան ելիքը, նու յեկավ ինձ մոտ, աղաջում, խնդրում եր, վոր յես մի լուր տամ իրեն իր աղջկա՝ Եվդոյի մասին: Բայց յես... սահցի... խարեցի նրան... ասացի, վոր աղջիդ մեռավ իր մորից առաջ: Նա հավատաց ինձ:

Աչքերը մի պահ կատաղությունից փայլեցին, շրթունքները գողացին, բռունցքները սեղմած՝ արցունքներ թափելով նա գուրս վաղեց տնից:

Այդ այնպիս հանկարծակի յեկավ, վոր յես շկրովաց իմանալ նրա հասցեն, գոնե նրա ուր լինելը...

Աւ յերբ դու ծաղիկները ձեռքիդ, ուրախ ու զվարթ ներս մտար, հեկեկանքը ինձ խեղդեց...

Բայց խարեկ և քեզ՝ յես ույժ չունեցա...  
Եվ այս կարմիր որերին, յերբ ամենքը տոնում են մեծ հաղթանակի ամենավախմ տանը, վորին զոհ գնաց քո մայրը և այնքան տառապանքներ կրեց քո հայրը, յես այնքան ստոր, անազնիվ վերաբերվեցի դեպի նա...

Յերբ ուշքի յեկա, վազեցի նրա յետեից, հարկաւ վոր եր մի բառ ասեցի նրան... բայց յես սոսկացի... ոչքերս մթնեցին, լեզուս կապ ընկավ. — Վիկենտի... Վիկենտի... հազիվ շնչացի յես նրա յետեից...

Նա շմեց: Այնքան ծանր եր նրա վիշտը...  
Կարծես կանգնած գեռ նայում է ինձ, իր տանչալից ու թափծալի հայացքով...

— Եվդա, իմ վորքիկ Եվդա, խոսիր. դուցի մա-

տաղ, անարատ հոգուդ մեջ ինձ պախարակում ես. առա, յես արժանի յիմ...

— Մայրիկ, արցունքների մեջ գոչեց Շողերը ու ընկավ մոր զիրկը... յերկուսն ել լալիս եյին...  
Դուռը բաղխեցին:

Մայրը սարսափահար մոտեցավ պատուհանին:  
... նու յե... այլպես ել գիտեյի... անցիր... անցիր, բալիկս, մյուս սենյակ... բայց... վնչ... սպասիր. յես այլիս ույժ չունեմ... թող... թող զա...

Դուռը բացվեց. ներս եկավ շեկահեր, բարձր, հաղթական հասակով և գեռ յերիտասարդ մի տղամարդ:

— Ներեցեք, վոր նորից անհանգստացնում եմ ձեզ. ինձ ասացին, վոր իմ ընտանիքին միակ մտերիմ մարդը դուք եք յեղել և մեծ խնամք տարել նրանց այն նեղ որերին: Յերեկ ևս կոպիտ վարվեցի: Այնքան հուզված եյի, վոր ինձ կորցրել եյի... ներեցեք ինձ... թույլ տվեք զոնե սեղմելու ձեր ձեռքը ու իմ խորին շնորհակալությունը հայտնելու...  
Նա զլուխը խոնարհեց ու ձեռքը մեկնեց գեպի կինը:

— Սպասեցեք... վկիւնտի... յես ձեզ... յերեկ... ձիշտ չսացի, հուզված՝ հաղիվ արտասանեց նա:  
Շողերը, վոր քաղացած նայում եր այդ անձանթին, հանկարծ, ուշքի զարով, վազեց դեպի նա, «Հայրիկ՝ հայրիկ» բացականչելով:

— Յերեկ յես խարեցի ձեզ... յես սարսափում եյի, վոր պիտի զրկեմ իմ Շողերից... իմ անսահման սերը կուրացրել եր ինձ և յես այնքան ստոր վերաբերվեցի...

— Հայրիկ... չես լուսմ. յես քո Եվգոն եմ... քու  
փոքրիկ աղջիկը, վորին զու վորոնում ես...

Վիկենտին, վոր մինչ այդ շվար կանգնած եր,  
հանկարծ խորբ թափանցող հայացքով նայեց աղջկանը  
ու մի ակնթարթում գիրկն առավ նրան և հուզված,  
համարյա կիսախելազար, սկսեց անվերջ համբույրնե-  
րով ձածկել նրա յերեսը. ապա բարձրացրեց աղջկանը  
վեր, նորից առավ գիրկը. քրքջում ու կրկին խենթի  
պես նայում եր յերեսին... Եվգոն, դու ես, ճիշտ ե...  
զո՞ւ ես իմ փոքրիկ Եվգոն...

— Այսքան յերջանկություն կարելի<sup>o</sup> յե միան-  
գամից ունենալ տիկինս...


Նա համբուրում եր նույն կատաղությամբ և  
կնոջ ձեռքերն ու մատները...

Յերեքն ել արտասվում ելին, յերեքի աշքերիցն  
ել թափվում ելին յերջանկության ու հուզմունքի ար-  
ցունքներ...

## ՑԱՆԿ

Եջ	
1) Զագեսի բանվորը	3
2) Հունվարի 9-ը	6
3) Բեռնակիր Համբուն	11
4) Գիշերապահը	16
5) Փոքրիկ Եվգոն.	22

1925 թ.





Ապահով ՏՏՈ Ա

ՀՀ Ազգային գրադարան




NL0363059

50800

9pm - 1

ԳԻՆՆ Ե 20 Կ.



4 · 2-80  
50